



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Երանյան

Մինչև 4 ԲԵՄԿ/Ե

Երանյան

891.99

Կ-22

ՏՕԲԹ. Կ. Յ. ՓԱՇՏԱՅԵԱՆ-ԻԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԾՈՅ

ՄԻՇԷԼ ԵՒ ԲԸԼԻԶԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

ՎԻՊԱԿ I ԵՒ II

ԳԻՆՆ Է

1 ՂՐՈՒՇ ՈՂՋ

10 ԿՈՊԵԿ

25 ՍԱՆԹԻՄ

1906

891.99
Պ - 22

ՍԱՆ ԿԱՍՊԵԹԱ
(ՖԱՇՏԱՅԵԱՆ)

ՍԱՆԿՍԱՆԿՐԻՍ
(ԵԳԻՊՏՈՍ)

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԵՐԸ

1. — ՄԱՐԻՆՍԻ ԹԷ ԷՍՅԿԱՆՈՒՇ (վէպ, սպառած), Կ. Պոլիս, 1889:
2. — ՓՈՒՆՁ ԳԻՏԱԿԱՆ (բուն, երազ, կայլթ) Կ. Պոլիս, 1891, Գիմ 1 Ֆրանկ:
3. — ԱՂԶԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (վէպ) Կ. Պոլիս, 1895, Գիմ 1 Ֆրանկ:
4. — ՄԱԹԿԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՄԵՆ ԹՇՆԱՄԻՆ (հավանություն, սպառած), Ջսիւմփա, 1901:
5. — ԵՐԵՄՅԱՆԵՐԻ ՄՆՈՂՆԳԻՐ (ծննդից մինչև 15 տարեկան հասակը, սպառած), Ալեքսանդրապոլ, 1903:
6. — ՈՒՐՏԵՂ Է ԱԶՆՆՈՒԹԻՒՆԸ (Աղեքսանդրիոյ Սահմանադրական Պայքարը և Վերակազմեալները), Աղեքսանդրիա, 1905, Գիմ 50 Սանթիմ:
7. — ԸՆԿՆԱՐՁՄԱ ԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԻՒՆ (120 պատկերով, էջ 679), Աղեքսանդրիա, 1906, Գիմ 15 Ֆրանկ:

ՎԻՊՈՒԿԱՆ ՀԱՌԱՔԱՎՈՅ

8. — I. ՄԻՇԷԼ ԵՒ ՔԵԼԻՉԻՆ: II. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ (վիպակներ մէկ գրքովի մէջ), Աղեքսանդրիա, 1906, Գիմ 25 Սանթիմ:

ԵՒ ՊԻՏԻՒՔՈՑԱՍ ՏԵՆՆԵՆ

- III. ՃԱԿԱՏԱԳԻՐ:
- IV. ՎԱՐԺԱՊԵՏՈՆ ՊՂԱՏՈՆԱԿԱՆ ՍԷՐԸ:
- V. ՎԱՌՕ:
- VI. ԱՏՐԻՆԷ:
- VII. ՄԻՐՈՑ ՁՈՒՆԵՐ:
- VIII. ՄՈՂՈՒԹԵԱՆ ՁՈՒՆ:
- IX. ՄԱՐԿՈՑ ԲԷՆՍԱ:



91.99
Ի 22

-6 NOV 2011


ՄԻՇԷԼ ԵՒ ԳԵԼԻՉԻՆ

Ա.

1880 թիւ զարնան գեղեցիկ առաւօտ մըն էր. գեղանապ թռչուններ իրենց քաղցրիկ գեղգեղներով ու վարդն ալ իր հմայիչ բուրմունքով արշալոյսն կ'ողջունեն, որ ծագելու վրայ է: Բերայի պարանոյշ մըթնալորտը, ինչպէս ամբողջ բնութիւնը լուռ ու հանգարա էր, այս խորհրդաւոր լուսթիւնը միայն թռչուններու գայլայլիքներով կը խանդարէր, իսկ բնակիչները փափուկ անկողիններու մէջ ընկղմած իրենց աննշ երազներու վերջին տեսարաններն կը վայելէին...:

Բ... փողոցի տան մը վերնայարկի սենեակներէն մէկուն պատուհանները լայն կերպով բացւած էին. այդ սենեակի վարձակալը հազիւ քսան երկու գարուններ վայելած հայ երիտասարդ մըն էր, հասակով երկայն, դէմքով գեղեցիկ, որուն վրայ մեծ ու կոր հայկական քիթ մը և անոր տակը սև նրբաթել պէխեր կը տեսնէին. ձեռքը ու շարժումները թեթևասուրբ մը բլլալը կը մասնէին, լըծութեան ու խոհեմութեան փոքր նշը մը իսկ չէր կրէր, բացց գիտելու ու մտքուր հագլիլ և ազատ պարել ու խօսել:

Միւսի Միշէլ — այսպէս կը կոչէին զինքը — հայելիին առջև կայնած կանոցի յատուկ պըրասիրու-



ԵՆՏԵՅԵՆ

Թեամբ՝ կը զարդարէր, մինչդեռ ամբողջ թաղեցի-
ները խոր քունի մէջ էին: Կէս ժամէն հազիւ աւար-
տելով իր զարդարանքը, բուրսի (սիկառ) վառեց և
ծխելով սենեակին մէջ վեր վար պտտիլ սկսաւ մը-
տախտն:

Միշէլի բնակած տունը յոյն կնոջ մը սեփական-
նութիւն էր, որուն սենեակները առանձին առանձին
վարձու տալով կ'ապրէր. այս սենեակներէն մէկը
վարձած էր Միշէլ, երբոր մայրը մեռած էր, հայրը՝
արդէն իր երկու տարեկան եղած ժամանակ կորսն-
ցրնելու զժբարդութիւնն ունեցած էր: Մայրը լա-
ցարարութիւն ընելով զինքը մեծցուցած էր և Բերայի
ֆրէրներուն զպրօցը գնելով օտար դաստիարակու-
թիւն մը տուած էր: Միշէլ Բերայի ֆրանսացի մեծ
վաճառատան մը մէջ գրադրութիւն ընելով իր ապ-
րուտը կը հոգար. բաւական գաղիներէն գիտէր, բայց
հայերէնը հայտնութեան արատ բերելու չափ սովոր էր,
արդէն հայերէն խկ չէր, այլ խառնուրդ մը հայերէ-
նի, թուրքերէնի և ֆրանսերէնի...:

Միշէլի սենեակը բաւական ընդարձակ էր, որուն
մէկ անկիւնը մահճակալ մը և ուրիշ անկիւն մըն ալ
գրասեղան մը կար, որուն վրայ հայելի մը և անու-
շահոտ խղերու շիշեր կը տեսնուէին, չորս սպորդ ա-
թոններ և մէկ օրօրոցաւոր թիկնաթոռ ու պատերէն
կախուած երգչուհիներու մէկ քանի պատկերներ, ահա
Միշէլի ամբողջ կահ կարասիքը ասոնցմէ կը բաղ-
կանար:

Սիկառը ձեռքին մէջ պտտելով ինքնիրեն կը խօ-
սէր:

12992-59



— Եթէ յաջողի՞մ զինքը գլխէ հանել և անոր
հետ ամուսնանալ, ալ ուրիշ բան չեմ ուզեր, ամեն
փափաքներս անով կը լրանան, հօրը ժառանգութիւնը
կը վայելեմ, սեփական կառք կունենամ, թատրոն,
երեկոյթ ու պարահանդէս կը յաճախեմ, ամուսնացե-
ներ կերթամ և գեղանի կիներու հետ կը սիրաբա-
նեմ: Գեղանի կոյս մը թիխ տակ, մեծ հարստու-
թիւն մը ձեռքիս մէջ, երևելի անգլիացի գերդաս-
տանի մը վեսայ... ս'հ, մարդ ասոնցմէ աւելի
ի՞նչ բանի կը կարօտի: Այո՛, վերջապէս պիտի ազա-
տիմ՝ այս անկուտի և յուսահատեցնող վիճակէ. չը
մերժեց սէրս, նոյնիսկ ամուսնութեան խօսքեր ալ
ըբաւ. ծնողները մեր սգէտ հայ հարուստ ծնողներուն
պէս չեն մտածեր անշուշտ, որոնք իրենց ազլիկները
փող չունեցող երիտասարդներու կնութեան տալ կը
մերժեն, նոյն իսկ երկու կողմէ անկեղծ և ջերմ սէր
մը գոյութիւն ունեցած ըլլայ. եթէ օրիորդը հայ
ըլլար, դուցէ երեսա իսկ նայելու չը պիտի գիժա-
նէր...:

Պահ մը դադարեց խօսելէ ու պտտելէ և բաց
պատահանին առջև նստաւ մտածկոտ:

Արեգակը տակաւ առ տակաւ հորիզոնին վրայէն
վեհօրէն կը բարձրանար, վանելով իր առջևէն խա-
ւարը. թաղեցիները կամայ կամայ անկողիննէն բաժ-
նելով իրենց գործերուն կ'սկսէին, փողօցային ման-
րավաճառներու խորթ ձայները և կառքերու անի-
ներուն թառալման դրդոցը օդը կը լինդացնէին և
այս նեարդացնցող ազմուկի մէջ քնանալն արդէն ան-
կարելի էր, ինչպէս նոյն բունը կը պատահէր այդ մեծ
քաղաքներու մէջ, և շատ հաւանական է, որ այդ ե-

ուսն, ժխտաւից և ցնցող կեանքի հետևանքով այս
 գարուս մէջ մարդիկ ջղային կը դառնան : անոնք
 Եկեղեցիի ժամացոյցին երկու ք դարնելուն ձայնը
 Միշէլի խորհրդածութիւնները հիմն ի վեր տուպալէց,
 ճակտին վրայ դժգոհութեան գծեր գիզուիլ սկսան :
 — Ա՛յ, ե՛րբ պիտի ազատիմ չարս սրտի մէջ
 փակած տաններկու ժամ աշխատելէ, դժոխային
 տանջանք : Բայց ի՛նչ օգուտ, երթալու է, պարզան
 ձեռք ձգելու համար ապրելու է, ազրելու : անհ
 երջանիկ ապագայ : : : : :
 Հայելիին անջնանցնելով պիտերը ուրեց,
 խաղական փեղոյրը գլուխը դրնալով բարակ գտան
 զանն պանելով սենեակէն դուրս ելաւ, գրեթէ չու
 զելով : : : : :
 Բայց վերջապէս պիտի ազատիմ այն, օրի
 որդ Քըլիլին կմն պիտի ըլլայ և ես ալ հարսնատ : : :
 Քըլիլին յարմար անջնանցնելով պիտերը ուրեց,
 խաղական փեղոյրը գլուխը դրնալով բարակ գտան
 զանն պանելով սենեակէն դուրս ելաւ, գրեթէ չու
 զելով : : : : :
 Օրիորդ Քըլիլին Բերայի մեծահարուստ անգ
 ւիացի ընտանիքի մը կը պատկանէր, գեղեցիկ ըսե
 լու համար պէտք եղած դիմադիծերն ունէր, գե
 զարեանտի վարպետի մը համար ան կարող էր ծա
 սայել իբրև օրինակցու վէնիսական գեղեցկութեան
 երկայն հասակը ու երկայն վիզը, խոշոր կապոյտ աշ
 քերը, ոսկեգոյն մագերը, վարդագոյն չրթներն ու
 այտերը, մարդրտի նման սպիտակ առամները, ուժեղ
 կազմաւածքը, և վերջապէս ասոնց վրայ աւելցուցէք
 ձիւնի նման սպիտակ մարմին մը, փափուք և կիրթ
 ձևեր ու շարժւածքներ, սիրանոյշ նայածքներ ու

Կարտներ, և ահա ձեր աչքին առջև կուենանք Օր
 Քըլիլինի գառակերը : : : : :
 Քըլիլին մը բաւ էր հողորտոր սիրտեր իրեն
 շրաւելու և հրապրելու : : : : :
 Այս վիճակին մէջ Օր Քըլիլին Բերայի հա
 րիւրատոր կնոսք երիտասարդներու մտածման տուար
 կան էր դարձած, ամենուն բերնէն անոր անունը կը
 լսէր, ամեն կողմ անոր անունը արձագանք կը
 դնէր, անոր մէկ ժողովին արժանանալը երանու
 թիւն կը համարէին և այս պատճառով շարունակ
 անոր ասն շուրջը կը պտտէին : Այս խմբի մէջ ամեն
 սող իր ներկայացուցիչը ունէր, կարծես հաստատել
 կողմին թէ սէրը ազգութիւն չունի : : : : :
 Այս խմբի մէջէն կառավիր մը ցանկալի շահողը
 Միշէլ եղած էր, որովհետև Օրիորդին զեղբորը հետ
 շարունակը եղած էր և անոր մտերմութիւնը կը վա
 յելէր : : : : :
 Մըցողիկները անուշտ գիւրաւ զը պիտի վր
 նային մարտէլ Միշէլ այս յողմանակը, սոր իրենց
 իրաց տուրած էր, պարտաւթիւնին զգալով կը կատ
 լիէին և ամեն ատիկով նրեէ կերպով իրենց պիտե
 կը լսած էին, ծողրելով ու քաշուելով Միշէլը : : : : :
 — Երկայն քիթի պիտի սիրահարի, կըսէր ու
 տոնցմէ մէկը : : : : :
 — Ապուշ մը ըլլալիչ հասկնալով քու վրայ կը
 ննջայ, կըսէր ուրիշ մը : : : : :
 — Անոր ասն մէջ լաւ սպասուոր կրնաս ըլլալ,
 հա, հա, հա, երազելն ալ տեսակ մը հիւանդու
 թիւն է, կ'աւելցնէր ուրիշ մըն ալ : : : : :
 Եւ շատեր ալ իրենց հպարտութենէն պարտու

Թիւնին կը ծածկէին, բաւ համարելով միայն տը համարտտ նայածք մը ձգել Միշէլի վրայ :

Մտերայն ճամարտութիւնը խոտտովանելու համար պէտք է յայտնենք, որ Օր, Քըլլիզին ըստ երկոյթիկ Միշէլը կը սիրէր, որովհետեւ շատ անգամ իրարու թէ մտած Քըլլի-Շակի պարտէզին մէջ պտտելնին տ'անւած էր, թէ աչք պտտելնուն յաճախ օրիորդին եղբայրն ալ կ'ընկերանար : Այս մտերմական և ընկերական պարզ յարաբերութիւնը շատերուն կամակածեցնել տւած էր, և նոյնիսկ Միշէլ ևս կամ կածած էր թէ օրիորդը կը համակրէր կամ կը սիրէր Միշէլը :

Միշէլ այս մտերմական և անկեղծ յարաբերութիւններէն քաջալերւած, թոյլ տւած էր իրեն երազելու անոր հետ ամուսնանալու և անոր հարըստութեան տիրանալու : Առաջին անգամն ըլլալով սրտի տարօրինակ բարբախում մը կզգար, կզգար թէ անծանօթ ձեռք մը զինքը դէպի Օրիորդ Քըլլիզին կը մղէ . առանց անոր, կեանքը քաղցրութիւն չունի, կը փափաքէր անոր շնչած օդը շնչել և անոր սալրած մթնոլորտին մէջ ապրել... : Չը գիտենք թէ Միշէլի այս զգացածը ճամարտտ սէր մըն էր թէ անոր հարըստութեան տիրանալու ջերմ փափաք մը . սակայն ստուգութիւնը ինչ որ ալ ըլլայ, այս պարզ էր, որ իր սէրը Օրիորդը պաշտելու չափ առաջ տարած էր . մի օր, երբոր օրիորդին եղբայրը իրենց մտէն հեռացած էր, ուրիշ ընկերներու հետ տեսնելու համար, Միշէլ քաջութիւն ունեցաւ Օրիորդին ըսելու .

— Մհ, թոյլ տւէք սիրտս ձեր առջև բանալու և անոր մէջ բողբոջած սէրը ձեր սոքերուն տակ տիւտելու... :

Օրիորդը բարկութենէն կարծրեցաւ ու դեղնեցաւ . սիրային այս յայտարարութիւնը իրեն համար մեծ անակնկալ մըն էր, սբահ մը մտածեց թէ քնել Միշէլի երեւոր և հեռանալ, սակայն իր պագարխնութիւնը գտնելով թրթուան ձայնով մը պատասխանեց :

— Կը փափաքի՞ք ամուսինս ըլլալ... :

Միշէլ արդէն կարմրած էր, այս անակնկալ և անսպասելի առաջարկը լսելով, բոլորովին շիտխեցաւ և յազմունքէն չը կրցաւ պատասխանել . այնքան յուզւած էր, որ Օրիորդին արտասանած խօսքերուն հերնական շեշտը չը կրցաւ զգալ : Աչքերը խոնարհեցուցած էր :

— Ի՞նչ ու համար չէք պատասխանել, առեկցուց Օրիորդը, չարածծի քմ իծաղով մը :

Միշէլ հազիւ կրցաւ թօթուիլ .

— Չեք առջև ծուներ դնելով... :

— Որքեմն, տոյղ է, որ կը սիրէք զիս :

— Կը պաշտեմ իսկ... :

— Իրօք հետս ամուսնանալ կուզէք :

— Բնուական է, որ դուք կամենաք :

— Այդ կամքիս եթէ մտղներս հակուակիմ :

Միշէլ գունաթափուեցաւ, ճեղղներս խօսքին վրայ մտածել սկսաւ . ս'ի գիտէ ինչ խորհարդներ անցան ու գործան իր ուղեղին մէջ . ամբողջ մտրմով սարսուայ և գողգոմուն ձայնով մը յարեց .

— Եթէ փափաքելու ըլլաք անոնց կամքն ալ կընաք շահիլ :

— Կը փափաքիմ, պատասխանեց Օրիորդը, այս անգամ ճիւղաղային թրթիչ մը արծակելով : Նոյն միջու-

ցին եզբայրը մօտեցած ըլլալով, խօսակցութիւնը
ընդմիջւեց :

Միշէլ շատ անգամ վաճառատան գրասենեակին
մէջ իր գործը ձգելով փայլուն ապագային վրայ կը
մտածէր և Սպանիական դղեակներ կը շինէր... այս
պէս մի քանի ժամ վատնելէ և հաշիւներու մէջ սխա-
լումներ ընելէ յետոյ, հապիւ ու աբերելով լըջօրէն
իր աշխատանքը կը շարունակէր: Յոյսով սիւսին կատ-
րէր և այդ յոյսը իր էութիւնը, իր ապագան էր...:



Այս խօսակցութենէն յետոյ Օրիսրդը այլևս
չստ քիչ անգամ գաւրը կը տեսնէր և միշտ — խոյս
կուտար Միշէլէն:

Մօտաւորապէս տարի մը վերջը, կիրակի առա-
ւօտ մը, Միշէլ Բերայի մեծ փողոցէն կ'անցնէր մա-
քուր կերպով հագւած, ձեռքը գեղնագոյն ձեռնոց-
ներու մէջ և ոտքերը փայլուն փոքրիկ կոշիկներու
մէջ այն աստիճան կը սեղմէին, որ անոնց պատ-
ճառած ցաւին հետևանքով գրեթէ կը կազար, խա-
լական լայնեզր փեղոյրը աչքերը գոցելու չափ
գլխուն վրայ իջեցուցած, բարակ ձեռնափայտը ձեռ-
քին մէջ ճօճելով ու դարձնելով և քիթին տակէն օրե-
րայի կտոր մը սուլելով ուրախ ու զւարթ կը յա-
ռաջանար, ակնոցներուն վրայէն ու կողքէն՝ անցնող
ու դարձող կիներուն վրայ վաւաշտ ակնարկներ ձգե-
լով: Եւ ինչու համար ուրախ չ'ըլլար, քանի որ
փայլուն ապագայ մը իրեն կ'սպասէր...:

Երանբարայլ կը յառաջանար գէպի վայսի և

յօրենց-Քեյլի գրավաճառանոցները, որոնք, կիրակի
ըլլալուն պատճառով, փակ էին. Մարտգրուարի գա-
րեջրատունը մտաւ և շորս հինգ գաւաթ գարեջուր
կոնծելէ յետոյ, կրկին Բերայի մեծ փողոցները բռնեց,
այս անգամ գրեթէ ցատկաբար կը քալէր, տեսնող-
ները պիտի կարծէին թէ վայս կը պարէր: Հաճօրույս
խանէն ներս մտնելով ձախ կողմի անկիւնը Ֆրանսիայի
վաշակների եղբայրներուն Սարսե տիւ ֆուսֆօրը
մտաւ, հարկ չ'կայ ըսել, ամիլլելու համար:

Սափրիչը մկրատը ձեռքը իր գործին սկսաւ, իսկ
Միւսիւ Միշէլ կերևայ թէ մի քանի վայրկեան մի-
օրինակ նստելէ կը ձանձրանար, ուստի Ֆրանսերէն
Մուսուլուզ թերթը առնելով սկսաւ կարդալ:

Միշէլ կոյրօրէն և կապկօրէն կը հետևէր Եւրո-
պական արտաքին ձեւերուն, արտաքին մարդը Եւրո-
պացի, իսկ ներքին մարդը դարձեալ նոյն կոչաւ ու
կոպտո մարդը մնալով...: Իր ամենափոքր շարժում-
ները կուղէր, որ եւրոպացիներու շարժումներէ տար-
բերութիւն մը չ'ունենային, սովորութիւն մը, որ
ընտելեան կարգ անցած էր:

Սլելի զարմանալին և անհեթեթը կայ. իր ա-
նունը, սովորութիւնները և արտաքին ձեւերը եւրո-
պականացուցածին նման, իր ազգութիւնն ալ կ'եւրո-
պականացնէր, այո՛, շոտ անգամ օտարներու սուջի
իր հայ ըլլալն ալ կ'ուրանար...: Եւ ինչու համար
չ'ուրանար, քանի որ քիթը ակնոց, ձեռքը ձեռնոց և
բարակ դաւազան, գլուխը Եւրոպական փեղոյր, բեր-
նին մէջ Եւրոպական լեզուներէն՝ Ֆրանսերէնէ՛ կրիւ-
բառ և գլխին մէջ գատարկութիւն... անէր, զըր-
պաններն ալ խուզարկել չը մտնանք...:

իր վրայ մեծ համարում ունէր, Ֆրանսերէն առ նիւմաստ և ֆուգաբանութիւններով լի ստանաւորներ գրելով իրեն գրագէտի հովեր կուտար և գանձը ծոցէն հանելով պատահած ծանօթին կը կարգար:

Գուցէ կը կարծէր, որ հայութիւնը իբր անուանին արատ կը բերէ: . . . , իսկ այժմանը չէր մտածեր, որ ինքը հայութեան արատ մըն էր, սերախալի էր, որ անգիտակցաբար հայութիւնը կը փրկէր այդ արատէն, օտարացնելով իր անունը (Միքայէլ), օտարացնելով իր ազգութիւնը:

Սափրիչը իր գործը կը շարունակէր:

Միշէլի երեսի գոյնը մէկէն ի մէկ անտես, ջեզէ բռնածի նման գողալ սկսաւ, թերթը աչքերուն աւելի մօտեցաւ, գէնը այնպիսի արտայայտութիւն մը ստացաւ, որ կարծես տեսածին ու կարգացածին հաւատալ չէր ուզեր: Յետոյ, ամբողջ մարմնով գողաց, աչքերէն կրակ ցայտել սկսան, զարմացման ու միանգամայն բարկութեան ճիշ մը բառնալով նստած տեղէն վեր ցատկեց և ձեռքի բռնած թերթը մէկ կողմ նետեց. . . : Այս յանկարծական շարժումը ականջի մէկ մասին մկրատի բերելն գոհ երթալուն պատճառ եղաւ:

Մալժոնին մէջ պտտելով բարձրաձայն կը ճշէր.

— Անկարելի է, սխալ է. . . :

Սափրիչը այս տարօրինակ տեսարանին առջև չարած մնացեր էր, մինչդեռ Միսի Միշէլ սուր գանդիլը մտնալով, արագ շարժումով մը գեանէն թերթը վերցուց և սկսաւ կատաղի շեշտով մը կարգալ:

«Վաղը Սպանիական գեապանատան առաջին թարգման Գր. Թ. . . ի ամուսնութիւնը աւելի պիտի

«ունենայ Օրիորդ Քըլիդինի հետ, որ մայրութեամբ
«քիս անդլիախան գաղութին երեւելի չ' ճառականներ
«բէն Ճ. Գ. . . ի աղջիկն է:»

«Օրիորդ Քըլիդին, իր կրթութիւնը Հայ Սքոու
«լին մէջ առած է, և բացի Անգլիերէնէ զիտէ նաև
«Ֆրանսերէն և Գերմաներէն լեզուները, և այլն:»

Միշէլ ընթերցումը վերջացնելով թերթը սեղանին վրայ նետեց և գրածօրը կուտի հարւածով մը փճացնելէ յետոյ գոչեց.

— Սխալ է, բոլորովին սուտ է. . . :

— Բայց խնդրե՛մ Գարոն, մեզ հասկցուցէք թէ այս ասօղերը ձեր տարօրինակ բարկութեան հետ ինչ կապ ունին, մէջ մտաւ Սափրիչը հետաքրքրւած:

Միշէլ պահ մը Սափրիչին երեսը նայեց և շքրթութեանը խածնելով,

— Խնդրե՛մ, շատով աւարտեցէ՛ք ձեր գործը, չե՛մ կարող բացատրել ձեզ, Ժամանակը սուղ է, բոս և կրկին նստաւ սափրիչի աթոռին վրայ.

Արեան հասածը արդէն գողբած էր. սափրիչը կիսկտոտար քնացած գործը ամբողջացուց. Միշէլ փեղոյրը գնելով հակառակ ոտքի ցաւին շուտօքայլ վազոյց ելաւ:

Նոյն պահուն սափրիչի խանութին տուե հետաքրքրելու ամբօխ մը խանիլ սկսած էր, փոքրիկ դէպք մը, տեսարան մը հազարաւոր անձեր կը բուրբէ իր շուրջը, մանտանդ անդործ խանութպանները և անցորդները: Հետաքրքիր ամբօխը այս տարօրինակ անցքէն բան մը չը հասկցաւ և բնականաբար դժգոհ մնաց. . . , միայն շատերուն բերնէն ինկր է խօքը լսեցաւ և կարծես այլ խօսքով ալ իրենց

հետաքրքրութեան գոհացում տւած եղան:

Եւ իբրք ալ, նոյն պահուն Միշէլի վիճակը խն-
թէ մը տարբերութիւն չունէր:

Գ.

Միշէլ աճազարանօք տուն հասնելով դուռը գար-
կաւ: Տիկինը դուռը բանալով մեծ եղաւ զարմանքը,
երբոր Միշէլի գոյնը տփզուճած տեսաւ:

— Հիւանդ է՞ք, ի՞նչ է՞ք, այս ո՞րքան գունա-
թափուեր է՞ք, ըսաւ:

— Բան մը չ'ունիմ, Տիկին:

— Բայց զարմանալի բան, թիֆօյէ բռնւածի
նման երեսնիդ գոյն չկայ. տաք ապուր մը բերեմ
խմեցէք:

— Բան մը չեմ զգար Տիկին, ոչինչ ունիմ, ըսաւ
Միշէլ սրտին խռովութիւնը ու մտքին փոթորիկը
ծածկել ջանալով:

Եւ խկապէս, հակառակ գարեջուրի ազգեցու-
թեան, որ Միշէլի դէմքը կասկարմիր եղած պէտք է
ըլլար, բուրբուրի գեղնած էր:

— Ձեր դուրս ելնելէն քիչ յետոյ այս նամակը
բերին, ըսաւ Տիկինը, Միշէլին նամակ մը տալով:

— Տէ՛ք, ըսաւ Միշէլ ցնցւելով և անտար-
բեր վրայի հասցէն աչքէ անցուց:

Նամակը իրեն ուղղած էր:

Մենեակը ելաւ և նամակին կարևորութիւն չը
տալով զայն գրասեղանին վրայ նետեց:

Մահճակալին մօտենալով բարձին տակէն ու-
փօլվէր մը հանեց... և զայն քննելով գոհունակու-

թեան մոլեղին ճիչ մը բարձաւ:

Օ... Լաւ կրակ պիտի առնէ, Եթէ սոս'յգ է,
չը պիտի թողնեմ, որ հանգիստ սրտով ամուսնանան
և զիս դժբաղդ ընեն, անոնց հարսանիքը իմ արիւ-
նովը պէտք է ներկեմ, այո՛, վրէժս լաւեմ:

Գրասեղանին մօտենալով գրպանին բոլոր թըղ-
թերը և փողերը անոր վրայ նետեց և բարկութեամբ
կռուփը սեղանին զարնելով պոռաց.

— Օ՛ն, չուշանանք, պէտք է ժամանակին հաս-
նել, հիմադ պտակի տակ պէտք է եղած ըլլան, ա՛խ,
Քըլիզին... վրէժ...:

Ատամները կճրտացնելով ու՛փօլվէրը գրպանը
դրաւ, սակայն նոյն միջոցին նամակը նորէն աչքին
դպաւ, առաւ զայն, ուշադրութեամբ նայեցաւ և խե-
լադարի ազդակներով գոչեց.

— Ո՛հ, անոր գիրն է՛, ի՞նչ գրած է անիծեալը:

Աճազարանօք նամակը բացաւ, ծրարի հեռմէջի
նամակն ալ անվնաս կերպով պատուելով:

Հաղիւ կարդալը լմնցուցած էր, դէ՛մքը կաս-
կարմիր կտրած էր, կարծես ամբողջ արիւնը գլուխը
խուժած էր

Ահաւասիկ նամակին պարունակութիւնը:

«Պ. Միշէլ»

«Խոստովանութեան ժամը հասած է, կզգամ թէ
«իմ այս խոստովանութիւնը ձեզի շատ պիտի վը-
տացնէ, բայց ստիպւած եմ ամեն բան խոստովանիլ:»

«Դուք զիս սիրեցիք այն յոյսով, որ օր մը ինձ
«հեռ կամուսնանաք. սխալեցաք, առաջին սխալնիդ
«զայն երևակայելն եղաւ, իսկ երկրորդը զայն յայտ-
«նելնուդ եղանակը... Կը յիշէք անչուտ այն օրը ...
«որ ձեր սէրը յայտնեցիք ինձ առանց ամուսնելու —
«գեղեցիկ յանդգնութիւն —: Մեր ցոյց տւած ան-

«կեղծ բարեկամութիւնը և հողատար մտերմութիւնը
 «նւզեցիք չարաչար գործածել, նոյն իսկ կատարեալ
 «անբարեբաւար գտնեցաք ձեր դէմը ելլող առաջին
 «բարեկամահին ձեր սիրուհին կարծելով, որը ձեզ
 «հետ երբէք կասկածելի վարմունք մը չէր անեցած»
 «միթէ՞ բարեկամութիւնը սիրաբանութեանէ՞ զտանու
 «չափ խելք չունէիք, միթէ՞ օրիորդները ունենալու
 «չեն իրենց այր բարեկամները չը յիշեցիք նոյն իսկ
 «անգլխահան դուռը բնակարանութիւնը:»

«Ձեր յանդգնութեան պատիժը տալ փորձեցի և
 «յաջողեցայ ալ. բացատրեմ՝ միտքս, մի միայն սրտ
 «ժելու համար սէրը չը մերժել ձեռնացի, չը կըր-
 «նալով ծածկել նոյնիսկ բարկութիւնս և արհամա-
 «րանքս, որ դուք չը կրցաք կռահել յախչաակու-
 «թեան մէջ ըլլալով. ձեր երեսակայութեան մէջ մեծ
 «աղագայի մը յոյսը դրո՞մեցի, զգալով ձեր ներքին
 «զգացումները. և այժմ՝ այդ աղագայի կործանելը
 «կը տեսնէք... ահա ձեր պատիժը...:»

«Իմացէք, որ այսօրընէ ամուսնացած եմ Սպա-
 «նիական դեպքանատան առաջին թարգմանի հետ:
 «Կը կարեկցիմ ձեր վիճակին վրայ և կը խորտեմ,
 «որ ձեր վիճակին յարմար հայ օրիորդ մը գտնելով
 «անոր հետ ամուսնանաք. հայերը ես գործունեայ և
 «լուրջ մարդիկ ճանցած եմ, կը զարմանամ թէ դուք
 «ի՞նչպէս թիթևաօլիկ մը եղած էք:»

«Սո՛ր, թո՛ղ այս ձեզ պատիժ մը, բայց միևնոյն
 «ժամանակ խրատ մը ըլլայ:»

«ԲԼԻԻԶԻՆ»

Սենեակին մէջ խոր լուսութիւն մը տիրեց. Մի-
 շէլ շնչառառ նամակը ձեռքէն թողուց և թիկնա-

թուին մէջ թաղեցաւ, երկու ձեռքերով գլխին մա-
 ղերը բռնելով: Աչքերը բացած մեքենաբար սենեակ
 կին չորս անխնայները կը դիտէր. ձեռքերը թուլա-
 ցան ու վար ինկան. կարծես կը գառառցէր. յի
 — Ո՛չ, ես ալ իմ վրէժս պիտի լուծեմ... այլևս
 չը պէտք է բարսխէ այն սիրտը, որ իմ թշառու-
 թեանս համար միայն բաբախեց, ո՛հ, կը մերժէ զիս
 իսպառ... բայց ո՛ւր պիտի գտնէ երջանկութիւն... —
 մահուան ցուրտ գիրկը... —, ես զայն վնասեցի հոն,
 ո՛ւր ըլլալ պէտք էր — սիրոյ մէջ... և ինդերեցի զայն
 այնպիսի սիրով մը, որ արժանի էր անոր, սակայն
 փոխարէն ի՞նչ գտայ... — անգութ սիրտ մը, հրէ՛շ
 մը...:

Մագերը գլխին վրայ օձախուի գիզիլ սկսան,
 աչքերը իրենց խորոշներէն դուրս ցցեցան երկու
 հրավառ դեղակներու նման, բերանը փրփրած այն-
 պիսի շարժումներ կընէր, որ կարծես սիկառ կը ծխէր,
 չրթներն ու այտերը վերջին աստիճան կարմրած,
 բազուկներու մկանունքներն ուռած, շնչառութիւնը և
 սրտի բաբախումը բազմապատկած էին, բոլորովին
 ուժասպառ մեռելի նման թիկնաթուին մէջ տարած-
 ւած էր. քիչ մը վերջը գլխապտոյտ, գլխացառ, շըն-
 չառութեան դժւարութիւն և բոլոր մկանունքներու
 խոր թուլութիւն մը գալով աչքերն փակեցան,
 որոնցմէ արտասուքը ալբիւրի նման հոսիլ սկսած էր:

Քիչ յետոյ ընդհանուր ցնցում մը տեղի ունե-
 ցաւ, կարծես մի ելեկտրական հոսանք անցած ըլլար
 իր մարմինին մէջէն. այս ցնցումը կեանքի քայքայ-
 ման ճշմարիտ պատկերն էր, անոր հետեցան շնչա-

ուսթեան ու սրտի բարախման դադարում և կենդանական շերմութեան նազում :

Միշէլի վիզէն վեր մնացած մասերը կապոյտ գոյն մը աւած էին :

Մահան ահարկու տուերն իր արենանիշ ձեռքերը Միշէլի վրայ տարածած էր :

Եւ երբ տան Տիկինը ապուրը բերու, Միշէլ արդէն մեռած էր... :

Գէպի ուղեղը արեան հոտում մը անդի ունեցած էր :

ՎԵՐՁ

«Հայրենիք» 1886

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

Մերգոյենց կաւած մեղամարտն երկուստորը, որ իր մենակեաց բնաւորութեամբ ամբողջ Տ... երկնեւուն ծանօթ էր, առանձին կը շրջէր մտաւայ ամառանոցի պուրակներուն մէջ, այդ օր տը շատ զբարձալի և ախորժեւի էր. Յունիս ամիսը իր շուրջ ութեամբը կը փայլէր, ձառեր ու դառեր գրեթէ կանանչէ դառ ուրիշ գոյն չունէին. դայլայլող թրուշուններ իրենց հոգեյոյզ գեղեզներով աւելի մեծ սղեւորութիւն մը կը տային այդ էր երբեմն ամայի վայրերուն, և կարծես հեզասահ առաւելներու կարկաշտմները կը մըցէին թռչուններու ճէրբոցներուն հետ վերջապէս այդ վայրերը մեր չը տեսած, բայց երազած եղեմներու փոխւած էին :

Ինչպէս յիշեցինք, Մերգոյենց բառին կատարեալ նշանակութեամբը մենապէր մըն էր, իր բասնե հինգամեայ ծաղիկ հասակին մէջ աշխարհը կատար և միայն մարդիկը կը սիրէր. ինչպէս արդայնյապա է անմահն Գրիգոր Օտեան, որով անտարբեր էր բնութեան այս ընդհանուր խրախճանին, և կարծես բնութեան այս հոգեղմայլ տեսարանները աւելի կը արկւրեցնէին զինքը : Գլուխը կը ծըն վրայ կախ, մտախոհ կը շրջէր դաւարիքներուն վրայ, ձառերու շարին տակ, երբեմն անոնց հովանիին տակ նստելով կը խաղար հողին հետ, ճճիներուն հետ երախայի մը



նման, և երբեմն ալ հողին վրայ կը տարածւէր և գրպանէն գիւրք մը հանելով խոր ընթերցանութեան մէջ կը թաղւէր:

Մերգոյնեց բարերարներու շնորհիւ իր գեղարւեստի ուսումը վիճենայի մէջ աւարտած էր վաղուն քննութիւն մը անցնելով, սրանչելի ջուժակահար մըն էր, սահայն իր ծանօթները շտո քիչ անդամ պատահաւթիւն կաննեային տնտեսը ու լսել անոր ջուժակին հողի սունել ու խօսելը... և եթէ հաճէր իսկ ջուժակը — այդ Ատուածային գործիքը — ձեռք առնել, կածէր միայն այն կտորները, սրանք ցառքած անքերէ բանի արտատուքներ կը կարգէին, քարայցած ու անդդայ սրակերն թունդ կը հանէին, միշտ տխուր... միշտ մեղանդակի...:

Իր ծանօթները կը զօգրեանային այդ հանճարեղ ու ասարկեղանոր երիտասարդին մեղամարձոտ և մեղանանլ բնաւորութեանը վրայ, և արիւ պատճառ մը չը գանելով, այդ վիճակը գաղտնի սիրահարութեան մը կը վերագրէին... Սահայն, սեւլի գարմանալին այն էր, որ խեղճը իր կենացը մէջ սիրայէն խնդրներով բնաւ չէր զբաղած, երբեք էր պատահած սիրող սրախ մը, որ իր սրտին անկեղծ թարգմանն եղած ըլլար: Այո, վիճենայի — սղառ ու աշխարհիկ կեներու այդ դասին — մէջ տակաւին կնկան մը կամ օրիորդի մը ձեռք սեղմած չէր... մէկ խօսքով, արդէ ժամանակիս խել մը օրիորդներէն աւելի պարկեշտ և աւելի կոյս երիտասարդ մըն էր... և գուցէ ճիշդ այդ պարագան էր, որ զինքը շղային և մեղամարձոտ ըրած էր:

Եթէ պատահաբար զարթ ընկերութեան մը



մէջ գանէր, բռնապարտի ժպիտներով ինքզինքը զարթ յուցնել կը ջանար, բայց յետոյ միշտ տխուր, միշտ մտածկոտ, միշտ մեղատէր... բանի կը համակերպէր գարձատէր մարգկանց ընկերութեան և ներքնապէս դժգոհ էր այդպիսի ընկերութեան մը մէջ գտնուած ըլլալուն համար:

Մերգոյնեց երբոր կը շրջէր թուիերու մէջ, յանկարծ հողին վրայ ձերմակ շրջանակով սևապատ թուղթ մը տեսաւ, տարօրինակ նախաղցայումէ մը յուզած առաւ այդ թղթի կտորը և արձանացած ժամերով հաւեպիլ զիտեց զայն...:

Լուսանկար մըն էր այն... խիտա դեղանի օրիորդի մը պատկերը կրող կարսած յուսակիար մը...: Այդ օրընէ սկսաւ ամեն օր յաճախել այդ միկնոյն վաղը, կտրծեա լուսանկարին իրականը, իսկականը կը խնդրէր... զիպւածէն...: Ջուժակը ձեռքը ման կը դար անտառին մէջ, ջուժակի թեւերը իր արտատուքներովը թըջելով, և այդ թըջած թեւերէ այնպիսի հողեղբաւ և սրտայոյղ ձայներ գաբս կը զային, որ եթէ Ատոյիկ լսէր, ծունք կը դնէր զայն ամող նոր Աղտնիսին տուչն...:

Իր ծանօթները եթէ մեղք մը գործած էին նախապէս զայն սիրահարած կարծելով, հիմայ իրակաւութիւնը կը խտտովանէին. որովհետև Մերգոյնեց կատարեալ սիրահար մըն էր... այո, կը սիրէր այնպիսի կոյս մը, որուն ստերին վրայ արտատուէր

կարծ ընկերութեան մը

տարբանողութիւնն ունէր... այո՛, կը սիրէր Լուսա-
նրկիւր... թղթի կտորը:

Շատ երկար ժամանակ անցաւ այն երանեալ
օրէն ի վեր, որ Լուսանկարը գտած էր, բայց տա-
կաւէն չէր գտած անոր պարունակեալը...: Կը հալէր
ու կը մաշէր խեշճ արւեստագէտը, որուն վրայ ամ-
բողջ քաղաքացիք կը գուրգուրային:

Այլևս շատ քիչ անգամ կը տեսնէր ընկերու-
թեանց մէջ և շատ քիչ անգամ կը մասնակցէր նա-
գահանդէսներու և երեկոյթներու:

Իր մենամուտութիւնը աւելի ծայրայեղութեան
տարած էր. փոթորկախառն ձիւնը երբ առատօրէն
կը տեղար, երբ հիւսիսային սառնաշունչ քամին
ուժգին կը բվար, ինքը ջութակը ձեռքը միայնակ
կը թափառէր անտառին մէջ: Երևակայեցէք, սիրելի
ընթերցողներ, քսանեօթը տարեկան ծաղկահասակ
տաղանդաւոր երիտասարդ մը, իր ջութակը ազիտ-
գործ հնչեցնելով ու սաք սաք արատաւքներ թափե-
լով երբ կը թափառի այդ ամայի անտառներուն մէջ,
զորս ձիւնը ամբողջ սառոյցէ կոյսի մը վերածած է
և փոթորկաբեր քամին ուժգին կը ծեծէ հանաւոր
ժառերու արմատներն և մերկ ոտներն, ինչ սրտաճըմ-
լիկ ու սարսազողեցիկ տեսարան մը կըլլայ այդ...:

Եւ արդէն բոլոր քաղաքը կախստար այդ նորա-
ծիլ ու ազնիւ հանճարին այդքան շուտ և տխուր
կերպով վերջանալը տեսնելով...:

Որովհետև զայն խենթեցած կը կարծէին...:

Գուցէ չէին սխալւած:

Անցած էին երկու երեք երկար տարիներ:

Այնուկանի մը ապարանքի սենեակներէն մեկուն
անկիւնը անկողնի մէջ տասնեօթնամեայ կոյս մը պառ-
կած էր. կը հազար, շարունակ կը հազար, հակառակ
իր մարմնին տեղումնութեանը, այտերը բոցափառ էին
և իր գեղնօրակ ոսկեթել մազերը ցիրձու ցան սաղի-
տակ բարձին վրայ ձգւած էին. պսղ պսղ քրտինք
մը ամբողջ վտիտ ու նիհար մարմինը կը պատէր,
աչքերը չը գիտեմ ինչպիսի գիւթիչ զօրութիւն մը
ունէին իրենց մէջ, որ հակառակ հիւսնդազին վիճա-
կին, աննց մէջ նայողը կը մտնար իր դոյնութիւնը...:
Աւագ, այդ ակնարկը, որ շատերու Թրանսլութիւն կը
խոստանար, թշուապացած էր անձ մը, և այդ անձն
ալ Միրզոյենց արւեստագէտն էր...:
Միրզոյենց արատաւելից աչքերով կը հակէր նար-
դուհի մնարին մօտ, այլևս ձգած էր ջութակ, ան-
տառ և ամեն ինչ...: աշխարհիս վրայ միակ առար-
կայ մը ունէր պաշտելի ու փարելի, և այդ առար-
կան ալ անկողնին մէջ էր, որ աւագ քիչ յետոյ սև
հողին պիտի յանձնէին...: փոխանակ իր գրկին յանձ-
նելու...:

Տանդէական վճիռը այլևս արձակւած էր բժշկին
բերնով...:

Նարդուհի թորախտացեալ էր...:
Եւ իր օրերը համբւած էին...:

Նարդուհի հայրը վերջապէս խօստացած էր իր

աղջիկը Միրզոյենցին կնութեան տալ, եթէ... Աստուած իրեն պարգևէր:

Միրզոյենց միայն խօստուճով չէր դռնացած, ուղղած էր նշանել պաշտօնագետ. դե մայրամբ:

— Որպէս զի, կըսէր, եթէ երբեք նէ մեռնի, ուխտս յաւիտեան կան ըլլայ...:

— Ախ, կըսէր մտովի Նարգուհիի հայրը, այս թշուառութեան միակ պատճառը ես եմ, այո՛, կը սիրէր անիկա և ես չուզեցի անոր տալ, ու հիմայ, վախ, սև հողին պիտի յանձնեմ...:

Ախ, տկար միտք, յիմար արարած, ինչեր չը պահանջեցի խեղճ երիտասարդէն...:

աղնականութիւն, հարստութիւն, բարձր գէրք...:

արհամարեցի արեւտագէտը, նախընտրեցի վաճառականը, իսկ Նարգուհիս, ո՛հ պաշտելի աղջիկս, ընդհակառակը արհամարեց հարուստը և նախարարուեց ու սիրեց արեւտագէտը...:

և ես երկար ժամանակ անոր սրտին հակառակ վարեւելով, վերջապէս բերի հատուցի այս վիճակին... և սև մահը այլևս թող չը պիտի տայ որ ես դառնամ իմ բռնած յիմար ճամբէս, ախ...:

Եւ չը կրցաւ շարունակել իր մենախօսութիւնը. արտասուքներու դառն կաթիլներ եկան ծածկեցին իր գունաթափ դէմքը և սպիտակ մօրուքը, հեծկտանքներու մէջ մարեցաւ իր ձայնը...:

անձանօթ ձեռք մը կարծես շնչափողը սեղմելով կը խղզէր զինքը...:

...

...

...

...

...

...

որուն ամբողջ քաղաքը կը հեռուէր. կը ժպտէր դառունը, որովհետև, ծաղկազարդ դաշտին մէջ նոր ծաղիկ մըն ալ պիտի աւելնար:

Արեւտագէտը երկար մազերը լայնեզր գլխարկին տակ ճրճզնած, գլխիկոր, սրտաբեկ և տխուր կը հեռուէր սեպատ և ծաղկազարդ դազազին...:

Գաղաղը խնամով հասարակաց փոսին մէջ իջեցուցին...:

քահանան հազիւ լրացուցած էր իր վերջին աղօթքը, երբ յանկարծ ատրճանակի պայթման ձայնը լսելի եղաւ...:

Ներկայ գտնուողները սարսափեցան... և երբ որ դազազին վրայ կը գլտորէր Մերզոյենցի արիւնաթաթաւ և կիտաշունչ դիակը, երկրորդ պայթում մըն ալ լսեցաւ...:

Երկրորդ դիակ մըն ալ ինկաւ Նարգուհիի դազազին վրայ...:

Նարգուհիի խեղճ հայրը փոխան արտասուելու մէկին վրայ, հիմայ կողբայ երեք դիակի վրայ...:

Վ. Ե. Բ. Զ.

«Հայրենիք»

1888



Գաղբեցաւ հազը, այլ չը դաղբեցաւ լացը: Նարգուհին մեռաւ...: Գարունը կարծես կը ժպտէր այն դազազին,

ար. զեպետի զի . զեկեանէ զի զգարաց. կրպիւս մ'աղս
 առ 6 դամ ԶԱ միտաւար բոսարաբրան, ձեռնէկապո զգեալ
 : զամբլեա ժախր յա մըն բիբ
 - զտալլըր զբեմնայ զգեքան զախիմ զաւերապատմայ
 զի զտախ մ իմպապա զախիմայր, ճամբնոչ թառ միմ
 : ... միտաւար բոսարաբրան մ'աղսառնա զեկեանէ
 միմ ԶԱ միտախ բոսարապատմ իմեառնի զաբառ
 - զախի զի զճարտապայ զիրան՝ մամնոչայ, ... միմպայ
 մանեկապո ժիւսմանպատ ճոպմնայ, զիմ զպեկիորա միմ
 - միտապատ զգեմբումար լոպղմա՝ ... ապմ զլլեմ զմիմն
 - զբոլղմիմ զեկապայ զի լապի միտաւար զի զիմ մ' ... մար
 զպոպղմ զլիւմի զմնոչապի մ'աղսախախառնի զիմ
 մըն թախր զպոպղմիմ, ... ապմայ յա մըն ՚նաեկիպո
 : ... լապի միտաւար զիմնապոպմ՝ ապմիմ յա
 ալմաաապա մամախի զպլոն ճրմնիմ զիմնապոպմ
 : ... լապի միտախ զեկմ լապրոմ լապիմ, լապի միմիմ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

1881



ՆՈՐ ԳՐՊԱՆԻ ԲԱՌԱՐԱՆ
Կ Ա Մ
ԳՐՊԱՆՆԻԴ ԸՆԿԵՐԸ

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ

1

ԱՆԳԼԻՇՐԵԿՆԵ - ՀԱՅՐԵԿՆ

ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ 376 ԵՐԵՆՆԵՐԻ

ԳԻՆՆ Է

Կաշեկաղմ 1 տոլար, Լաթակաղմ 75 սէնթ

2

ՀԱՅՐԵԿՆԵ - ԱՆԳԼԻՇՐԵԿՆ

ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ ՄՕՏ 250 ԵՐԵՆՆԵՐԻ

ԳԻՆՆ Է

Կաշեկաղմ 1 տոլար, Լաթակաղմ 75 սէնթ

Գիմել կամիսիկ վճարով

M. K. Sadoian, 27 Beach ST.

Boston, Mass. (U. S. A.)

Անգլիերէն խօսիչ և կարդալ ու գրողներուն ձրևա-
 րիտ և սևքսման ընկերներն եւն այս գոյց բառա-
 րանները, գիւնն ալ շատ մատուցի:

1p

ԼԿԲ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Չանագան ժամանակներու և զանագան թերթերու մէջ ըոյս տեսած մեր վիպական գրածքները լեզական և այլ թեթև բարեփոխումներով և վիպական հաւարածոյ ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ առանձին գրքոյկներով պիտի հրատարակենք, անոնց նախապէս հրատարակած թւականներու կարգովը:

Այս գրքոյկները պիտի վաճառուին թիֆլիսի գրավաճառներուն մօտ և հետևեալ տեղերը՝

Պոսթօն— Մ. Սատոյեան, 27 Beach st.

Ֆիլիպի— «Ռազմիկ»ի խմբագրատունը.

Սարևաստ— Ստեփան Թաղէոսեան.

Թաշրիզ— Տօքթ. Պ. Ասլանեան.

Եգիպտոս— Մեր մօտ՝

Le Docteur Paschayan-Khan
Alexandrie (Egypte)

Տասը օրինակէն առելի գնողներուն 100ին 10 զեղջ պիտի ըլլայ, եթէ ուղղակի մեզ դիմեն և փոխարժէքը կանխել վճարեն:

ՏՕԲԹ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆ

23 Ապրիլ 1906

Աղերսանդրիս

« Ազգային գրադարան



NL0372262

0

59.753